Հավելված 1
Հաստատված է
«ԱյԴի Բանկ» ՓԲԸ վարչության
21 մայիսի 2024 թվականի N 174 -Լ որոշմամբ
Գործում է սկսած 2024 թվականի հունիսի 1–ից

Պրեմիում քարտերի գծով վճարային արշավի իրականացման պայմաններ

1. Ընդհանուր դրույթներ.

1.1 **Արշավ՝** «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ի կողմից 01.06.2024թ-ից 31.07.2024թ-ը ներառյալ իրականացվող արշավ:
1.2 **Պրեմիում քարտ՝** «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ի կողմից տարեկան սպասարկման միջնորդավճարով պատվիրված Travel, Visa Platinum, Visa Business Platinum, Visa Signature, Visa Infinite, Visa Infinite Special Edition հիմնական քարտեր:
1.3 **Idplus լոյալության հարթակ՝** բջջային հավելված, որտեղ հասանելի են լոյալության հարթակի բոլոր ծառայությունները՝ էլեկտրոնային նվեր քարտեր, բոնուսներ, IDcoin...:
1.4 **Գործընկեր՝** «Իդրամ» ՍՊԸ հետ համագործակցող ընկերություն, որտեղ առկա է Idram QR վճարման հնարավորություն:
1.5 **Քարտատեր՝** Պրեմիում քարտի քարտապան:
1.6 Արշավին մասնակցելու դեպքում Քարտատերն անվերապահորեն ընդունում է սույն Պայմանները և Դրույթները, որոնք համարվում են վերջնական և անվիճարկելի:

2. Արշավի պայմաններ.

2.1 Քարտատերերը 01.06.2024թ-ից մինչև 31.07.2024թ-ը ներառյալ Պրեմիում քարտով իրականացնելով նվազագույնը 1 000 000 ՀՀ դրամ (համարժեք արտարժույթ) վճարային գործարքներ կստանան 50 000 ՀՀ դրամ արժողությամբ Idplus լոյալության հարթակի Carpisa նվեր քարտ՝ Կարպիսա խանութների ցանցից Իդրամ QR-ի միջոցով գնումներ կատարելու համար: Մեկից ավել Պրեմիում քարտերի առկայության դեպքում Քարտատերը հնարավորություն կունենա ստանալու Պրեմիում քարտերի քանակին համապատասխան Carpisa նվեր քարտեր, եթե յուրաքանչյուր Պրեմիում քարտով ապահովել է 1 000 000 ՀՀ դրամ (համարժեք արտարժույթ) վճարումների պայմանը: 1 000 000 ՀՀ դրամ վճարային գործարքները հանրագումարային են՝ ներառելով արշավի ժամանակահատվածում կատարված բոլոր վճարային գործարքները:

2.2 Սույն Արշավի շրջանակում վճարային գործարք է համարվում քարտով առևտրի սպասարկման կետերում կատարված վճարումները՝ բացառությամբ հեռահաղորդակցության ծառայությունների, կոմունալ ծառայությունների, էլեկտրոնային փողերի, պետական մարմինների վճարումների (հարկեր, տուրքեր և այլ վճարներ), բարեգործական հանգանակությունների, խաղադրույքների,

բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների դիմաց վճարումների:

2.3 Նվեր քարտի գործողության ժամկետի ավարտը 5 ամիս է, որը հաշվարկվում է նվեր քարտի տրամադրման օրվանից:

2.4 Քարտատերերի կողմից Արշավին մասնակցությունն ավտոմատ չի կատարվում: Արշավին մասնակցելու համար պարտադիր պայման է Արշավի ընթացքում՝ 01/06/2024թ-ից մինչև 31/07/2024թ-ը ներառյալ գրանցվել այս հղումով և ընդունել Արշավի կանոնները: Նշված հղումով չգրանցվելու դեպքում Քարտատերերը չեն ստանա 50 000 ՀՀ դրամ արժողությամբ նվեր քարտ (այսուհետ՝ Carpisa նվեր քարտ) անկախ վճարային գործարքների նվազագույն շեմը կատարելու փաստից:

2.5 Վճարային գործարքները կատարելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում Բանկը Քարտատիրոջ Բանկում գրանցված հեռախոսահամարով կակտիվացնի Idplus լոյալության հարթակի Carpisa նվեր քարտը: Մեկից ավել բջջային հեռախոսահամար ունենալու դեպքում նախապատվությունը տրամադրվելու է Idram&IDBank հավելվածում գրանցված բջջային հեռախոսահամարին: Ընդ որում, Բանկի կողմից արդեն իսկ վճարված Carpisa նվեր քարտը Քարտատիրոջ այլ բջջային հեռախոսահամարին փոխանցելու անհրաժեշտության դեպքում հարկավոր է Բանկին տեղեկացնել Carpisa նվեր քարտը ստանալուց հետո առավելագույնը 10 օրացուցային օրվա ընթացքում:

2.6 Carpisa նվեր քարտը հնարավոր է օգտագործել միայն Կարպիսա խանութների ցանցում՝ Իդրամ QR-ի միջոցով գնումներ կատարելու համար:

2.7 Արշավի շրջանակում տրամադրված Carpisa նվեր քարտի առկայությամբ Քարտատերերը Կարպիսա խանութների ցանցից կստանան 40% զեղչ (ճամպրուկի արժեքի սկզբնական գումարի վրա) խանութ սրահում Բանկի լոգոյով տարբերակված (այսուհետ՝ Նշված տեսականի) ճամպրուկների/ճամփորդական պայուսակների (այսուհետ՝ ճամպրուկ) գնման համար:

2.8 Արշավի շրջանակում ճամպրուկների Նշված տեսականու համար 40% զեղչից օգտվելու համար Քարտատերը՝ նախքան գնում կատարելը, Կարպիսա խանութների ցանցի աշխատակցին պետք է հայտնի բջջային հեռախոսահամարի վերջին 5 թվերը, որին ստացել է Carpisa նվեր քարտը: Կարպիսա խանութների ցանցի աշխատակիցը կստուգի Քարտատիրոջ կողմից տրամադրված բջջային հեռախոսահամարի վերջին 5 թվերի համապատասխանությունը և դրական արդյունքի դեպքում կկիրառի սահմանված զեղչը:

2.9 Նշված տեսականու համար սահմանված 40% զեղչից բացի, 01/06/2024թ-ից 31/08/2024թ-ը ընկած ժամանակահատվածում Քարտատերերի համար կգործի 15% զեղչ ճամպրուկների ամբողջ տեսականու համար:

2.10 Ճամպրուկների համար նախատեսված 40% կամ 15% զեղչերը կգործեն մինչև 31/08/2024թ-ը, սակայն նվեր քարտը հնարավոր կլինի օգտագործել նվեր քարտի գործողության ժամկետի՝ 5 ամսվա, ընթացքում:

2.11 Ճամպրուկների Նշված տեսականու ձեռքբերման համար չկա սահմանափակում 40% զեղչի ստացման գծով, հետևաբար Քարտատերը կարող է ձեռք բերել իր ցանկացած ճամպրուկը՝ անկախ չափից, գնից, քանակից և տեսակից: Քարտատիրոջ կողմից Carpisa նվեր քարտի միջոցով խանութ սրահից այլ գնում կատարելու դեպքում ճամպրուկների համար նախատեսված 40% կամ 15% զեղչերը չեն գործի՝ փոխարենը կգործեն տվյալ պահին Կարպիսա խանութ սրահում գործող փաստացի գները: Սույն կանոններում նշված 40% կամ 15% զեղչերը չեն գումարվում Կարպիսա խանութ սրահի կողմից ճամպրուկների համար հայտարարված զեղչին: Խանութ սրահի կողմից արդեն իսկ զեղչված ճամպրուկների գնման դեպքում Քարտատերերի համար գործելու է սույն կանոններով սահմանված 40% կամ 15% զեղչերը սկզբնական արժեքի նկատմամբ կամ Կարպիսա խանութ սրահում գործող փաստացի զեղչված գինը:

2.12 Բանկի կողմից Carpisa խանութ սրահի նվեր քարտի վճարման պահին Քարտատիրոջ Պրեմիում քարտը պետք է գործող լինի:

2.13 Բանկը պատասխանատվություն չի կրում Քարտատիրոջն ուղարկված Carpisa նվեր քարտը չնկատելու և այն սույն կանոններով սահմանված ժամկետում չօգտագործելու համար:

2.14 Բանկն իրավունք ունի սույն պայմանների և դրույթների մեջ ցանկացած պահի կատարել միակողմանի փոփոխություն և կիրառել փոփոխությունն անմիջապես՝ Բանկի պաշտոնական կայքում հրապարակելուց հետո: